ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են պատանիների և երիտասարդների կրթության և դաստիարակության նշանակությունը,

Ձգտելով զարգացնել համագործակցությունը որակյալ մասնագետների պատրաստման միջոցով,

Կարևորելով հետաքրքրության բարձրացումը մարզական արդյունաբերության նկատմամբ, ինչպես նաև դրա իրականացման համար գրավիչ պայմանների ստեղծումը,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը կրթական, մարզական միջոցառումների համատեղ իրականացման համատեքստում,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

Սույն Հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Սպորտի Կառավարման Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Կենտրոն») պատրաստակամ են.

2.1 պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան առաջխաղացնել պատանիների և երիտասարդների շրջանում սպորտի նկատմամբ հարգանքը, Օլիմպիզի սկզբունքների կարևորությունը և դրանց գործնական կիրառումը, ծանոթացնել վերջիններիս սպորտի արդյունավետ կառավարման գործնական եղանակների և դրանց իրագործման հետ:

2.1.1 Վերը նշված կետի իրագործման նպատակով Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝ ժամանակ առ ժամանակ Ինստիտուտը Կենտրոնին կներկայացնի սահմանափակ թվով ուսանողների վերջիններիս (մասնագիտական) պրակտիկան Կենտրոնում կազմակերպելու նպատակով, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն Հուշագրին կից հավելվածով:

2.1.2 Ուսանողների քանակը, պրակտիկայի ժամկետը և պրակտիկայի պայմանները ենթակա են համաձայնեցման Կողմերի միջև պրակտիկայի մեկնարկից առնվազն երեք ամիս առաջ:

2.1.3 Սույն կետը չի առաջացնում պոզիտիվի պարտավորություն Կողմերի համար՝ համաձայն սույն Հուշագրի 4.3-րդ կետի, սակայն Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել լավագույն միջոցներն այն կատարելու համար:

2.2 փոխադարձ աջակցություն ցուցաբերել մարզակրթական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում

2.3 ուսանողների և դպրոցի սաների մասնակցության ակտիվության խթանման նպատակով տեղեկատվական միջոցառումներ կազմակեպել, ստեղծել մասնակցության նպաստավոր պայմաններ

2.4 Կողմերը երկուստեք պատրաստակամ են նաև.

2.4.1 համագործակցել նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.4.2. համագործակցել Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.4.3 համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի մշակման և իրականացման շուրջ

2.4.4 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ

2.4.5 ներգրավել Կենտրոնի մասնագետներին Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում

2.4.6 սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համագործակցել Կողմերի տարածքների, գույքի օգտագործման շուրջ

2.4.7 Սպորտի բնագավառում դրա առաջխաղացմանն ու զարգացմանն ուղղված այլ համատեղ գործողությունների իրականացում, որը բխում է Կողմերի կանոնադրական նպատակներից և ենթակա է նախապես համաձայնեցման Կողմերի միջև:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, փոխադարձ հարգանքի և վստահության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը, ներառյալ դրան կից հավելվածը, չեն առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար: Սույն Հուշագիրը, ներառյալ դրան կից հավելվածը, մտադրությունների մասին համաձայնություն է, ինչը պարունակում և հաստատում է Կողմերի համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը: Միաժամանակ Կողմերը ընկալում և հաստատում են, որ սույն Հուշագրի, ներառյալ դրան կից հավելվածի, դրույթները չունեն Կողմերի համար պարտադիր իրավաբանական ուժ:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն լուծել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2026 թ մարտի 26-ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Կենտրոն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Սպորտի Կառավարման Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 41
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	տնօրենի ժ/պ՝ Խորեն Զարգարյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.

Հավելված

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի և «Սպորտի Կառավարման Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջև 26"03"2026 թ"-ին կնքված համագործակցության հուշագրի

1. Սույն հավելվածը սահմանում է Ինստիտուտի կողմից ներկայացված ուսանողների պրակտիկայի կազմակերպման և իրականացման կարգը Կենտրոնում, ինչպես նաև Կողմերի դերերը և պրակտիկայի նպատակը:
2. Ինստիտուտի որոշ ծրագրերի պրակտիկայի փուլերը պահանջում են բարձր որակավորում, գործնական հմտություններ, միջազգային հեղինակություն ունեցող անձանց վերահսկողության ներքո արտաքին հսկվող պրակտիկա:
3. Կենտրոնը հետաքրքրված է Ուսանողին առաջարկել հսկվող պրակտիկա:
4. Պրակտիկայի տևողությունը կարող է տարբերվել՝ կախված Ինստիտուտի ծրագրից: Յուրաքանչյուր ուսանողի համար պրակտիկայի ժամկետը կարգավորվում է առանձին, հետևյալ կերպ՝
   4.1. Ինստիտուտը Կենտրոնին էլ.փոստի միջոցով տեղեկացնում է ուսանողների քանակի վերաբերյալ և յուրաքանչյուրի մասով պրակտիկայի ակնկալվող ժամկետի տևողությունը.
   4.2. Վերը նշված էլ.փոստը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնը պատասխան նամակով տեղեկացնում է Ինստիտուտին առկա ռեսուրսների շրջանակներում, քանի ուսանողի պրակտիկա է կարող կազմակերպել և ինչքան ժամկետով.
   4.3. Ուսանողի պրակտիկայի ընթացքում Ինստիտուտը պետք է համագործակցի Կենտրոնի հետ և միջոցներ ձեռնարկի (այդ թվում Ինստիտուտի կանոնադրության սահմանված կարգով նաև կարգապահական) ուսանողի կողմից ուսումնական պլանն ապահովելու ուղղությամբ:
5. Կենտրոնը պետք է նշանակի ղեկավար՝ ուսանողի աշխատանքը վերահսկելու համար, որպեսզի ուսանողի փորձառությունը լինի հնարավորինս արդյունավետ նրա ուսուցման համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ուսուցումը տեղի է ունենում Պրակտիկայի գործընկերոջ գրասենյակում առկա ձևաչափով, թե հեռավար:
6. Սույն Հուշագրում Կենտրոնի մասնակցությունը որևէ կերպ չի պարտավորեցնում Կենտրոնին կնքել աշխատանքային պայմանագիր ուսանողի հետ: Եթե հետագայում Ուսանողը աշխատանքի ընդունվի Կենտրոնում, սույն պրակտիկան չի հաշվարկվի որպես աշխատանքային ստաժ և չի համարվի փորձաշրջան:

7. Ուսանողը Կենտրոնի կողմից չի ստանա կրթաթոշակ և տվյալ հարաբերությունների կարգավորումը մնում է բացառապես Ինստիտուտի և ուսանողի իրավահարաբերությունների շրջանակներում: Կենտրոնը չի իրականացնելու ուսանողի ճանապարհածախսի, կացության կամ այլ տեսակի ծախսեր կամ դրանց փոխհատուցում:
8. Պրակտիկայի ավարտից հետո Կենտրոնը կտրամադրի ավարտական գնահատող տեղեկանք՝ ուսանողի դրսևորած կատարողական մակարդակի վերաբերյալ, որը կներառի տասը բալանոց գնահատողական սանդղակով թվային գնահատական:

Ինստիտուտ	**Կենտրոն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Սպորտի Կառավարման Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 41
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	Տնօրենի ժ/պ՝ Խորեն Զարգարյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.